3. Առ ձեռն զանձարանում գանուումէ.	373	40
Ընդամէնն	12600	84
Բոլորն ի միասին	16557	41

Բացի սորանից Ընկերութիւնն ունի երեք հատ օսմանեան արծաթեայ դրամ եւ գպրոցական կահ կարասիք ու այլ իրեղէններ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ԿԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

Նաւշեցի թեմական դպրանոցի նախկին հոգաբարձու և գանձապահ Պ. Նիկոլայ բէգ Աթաբէգեանց՝ հակառակ տրամադրութեան կանոնադրութեան դպրանոցին և հրահանգութեանց վիճակաւորին և թեմական Ատենի, առ ի յանձնելոյ ի տեսչութիւն և ի պահպանութիւն նախագահի հոգաբարձութեան Գեր. Առաջնորդի վիճակին՝ զամենայն դպրոցական գումարս և զհաշիւս եղեալս առ ինքն, մինչ ցընտրութիւն նորոգ հոգաբարձուաց՝ ըստ կոնդակի Վեհափառ Հայրապետի ազգիս, ի 14 փետր. Համար. 72. ինքնակամ ընդ նախկին պաշտօնակցի իւրոյ Պ. Իւզբաշեանցի՝ զայնոսիկ դրամն առաքեալ է ի պահեստ արքունի գանձարանական մասին Տփխիսու, յենեալ ի 15 և ի 16 յօդուածս կանոնադրութեան այնր դպրանոցի, ըստ զօրութեան որոց՝ չունի և ոչ մին ի հոգաբարձուաց իրաւունս՝ վարել ընդ դպրոցական գումարս ըստ կամաց, նոյնպէս և ոչ կազմելոյ զժողով հասարակութեան առանց գիտութեան և մասնակցութեան առաջնորդի վիճակին՝ նախագահի նորին։ Սոյն օրինակ ինքնակամ արարմամբք հասուցեալ են նիւթական զրկանս դպրանոցին, ընդ նմին և ինն հարիւր ռուբլի տոկոսիս դպրոցական գումարաց եղելոց ընդ գրաւականաւ առ բժիշկ Աթաբէգեանցն և պաշտօնակիցն նորա Իւզբաշեանց՝ թողեալ են անպահանջ ի պարտապանէն։

Սինոդն Ս. Էջմիածնի տեսեալ զայսպիսի անկանոն գործողու-

թիւնս նոցա ի վնաս յառաջադիմութեան դպրանոցին, հրամանագրեաց վիճակաւոր Առաջնորդին Ղարաբաղու ի վերայ հիմանն 3, յօգ. կանոնադրութեան դպրանոցին՝ անմիջապէս պահանջել որպէս զդպրոցական գումարսն, որ յարքունի գանձարանական մասն Տփխիսու, նոյնպէս և զինն հարիւր բուբլի տոկոսիս դպրոցապատկան գումարաց ի բժիշկ Աթաբէգեանցէն։

—

Ի 20 մարտի Սինոդն Սրբոյ Էջմիածնի ըստ յայտարարութեանց Կոսիստ. Հայոց Երևանայ ի 24 նոյեմ. անցեալ ամի համար 3881, և 21 յունվ. տարւոյս համ. 176, զՍուքիաս քահանայն Շահումեանց վասն անկանոն ընթացից, և խարդախ իմն եղանակաւ ստանալոյ զվկայական ծննդեան եղբօր իւրոյ Աղաբէգի, ցուցանելով զնա իբրու հարազատ որդի իւր, ենթարկեաց երեք ամեայ ապաշխարանաց ի վանս Սևանայ անապատի, և հրամանագրեաց Կոնսիս. զանուն Աղաբէգի հանել ի ցուցակէ հոգևորականաց, և զտուեալ վկայականն անվաւեր համարել. իսկ զհովուութիւն ժողովրդոց յանձնելով այլոյ քահանայի, զկէս մասն արդեանց՝ տալ ընտանեաց արգելեալ քահանայի և զկէսն թողուլ հովուող քահանային։

—

Ի 20 մարտի. Սինոդն Ս. Էջմիածնի ըստ յայտարարութեան Կոնսիս. Հայոց Աստրախանայ ի 20 օգոստոսի համար 880, զԳէորգ քահանայն Արզումանեանց՝ ծխատէրն Գրօզնայի և շրջակայից նորին՝ վասն անարժան գործոց նորա և անխաղաղասէր բնաւորութեանց, հրամանագրեաց նմին լուծել ի քահանայական կարգէն, և համաթուել զնա ընդ սոսկ աշխարհականս։

—

Յ31 մարտի տարւոյս Սինոդն Ս։ Էջմիածնի հիմնեալ ի վերայ յայտարարութեան Կոնսիս. Հայոց Երևանայ ի 10 յունվարի համար 2290. հրամանագրեաց նմին՝ ընտրել ընդ ձեռն հոգևոր

կառավարութեան Հայոց Աղէքսանդրապօլու զերիս հոգաբարձուս ի բարեյոյս անձանց բնակչաց Գ. Արբխվալի գեղջ, և թոյլ տալ նոցա ձեռնարկել նորոգութեան տեղւոյն եկեղեցւոյ՝ հոգալով զծախս նորոգութեանն, յեկեղեցական դրամոց և ի սեպհականութենէ ժողովրդոց։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ.

Երևանցի հանգուցեալ Յակոբջանն Գէորգեան՝ կոտակած է՝ ա. չորս հարիւր բուբլի իբրև անմերձենալի դրամագլուխ՝ Երևանայ Հայոց Հոգևոր դպրանոցին, յատկացնելով տոկոսիքը մի աղքատ աշակերտի ուսման նոյն դպրանոցում. բ. երկու հարիւր բուբլի օրիորդական դպրոցին Ս. Գայիանէի. գ. հարիւր բուբլի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն Երևանայ և դ. հարիւր բուբլի աղքատանոցին նոյն քաղաքի։

Կոնսիստորիան Հայոց Երևանայ՝ հանգուցեալոյն յիշատակը յաւերժացնել կամենալով կարգադրած է յամենայն ամի անխափան՝ ի տօնի Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետի՝ կատարել Ս. Աստուածածնայ եկեղեցում հոգեհանգիստ հանդիսաւոր կերպով, ի ներկայութեան ժառանգաց ի Տէր հանգուցեալոյն, ուսուցչաց և աշակերտաց երկսեռ դպրոցաց։

Տէր լուսաւորեսցէ զհոգի հանգուցեալոյն և զյիշատակս նորա օրհնեսցէ. ամէն։



Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.